ՕԼՅԱ ՅՈՒՐԻԿԻ ՆՈՒՐԻՋԱՆՅԱՆ

Երաժշտագետ, արվեստագիտության թեկնածու,
Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի դոցենտ
E-mail: nurijanyanolya@gmail.com
Doi: 10.58580/18290019-2023.1.64-74

«Երաժշտական Հայաստան» ամսագրի խմբագրական խորհրդի
երաշխավորությամբ՝ Ծովինար Հրայրի Մովսիսյանի՝ 2.11.2023 թ.,
ընդունվել է տպագրության՝ 10.11.2023 թ.,
ներկայացրել է հեղինակը՝ 20.10.2021 թ.

«Կոնրադ Ադենաուեր» հիմնադրամի գիտաժողովի նյութերի ժողովածուն

Ամփոփում

«Կոնրադ Ադենաուեր» հիմնադրամի հետ համատեղ ԵՊԿ-ում կազմակերպված Գիտաժողովի նյութերի ժողովածուի գրախոսությունն է: Զեկույցները տպագրելու առաջարկը ներկայացրել էր ԵՊԿ-ն: «Ստեղծագործելը Խորհրդային Միությունում» ժողովածուն ռուսալեզու է, թարգմանիչ Կառլեն Մատինյան, խմբագիր Նաիրա Մարտիրյան, սրբագրիչ Գայանե Մերոյան, կոմպյուտերային շարվածքը և դիզայնը «ԹՈՒՄՈ դիզայն» կազմակերպության, տպագրվել է «Ասողիկ» տպագրատանը: Ժողովածուն հասցեագրված է ակադեմիական հանրության և ընթերցողների լայն շրջանին, քանի որ այն կրում է գիտաճանաչողական բնույթ: Հոդվածների նպատակն է եղել լուսաբանել բարդ և հակասական սովետական ժամանակաշրջանի պատմամշակութային պրոցեսները, նաև մշակույթի ու քաղաքականության փոխազդեցության ու փոխկապակցվածության խնդիրները:
Բանալի բառեր. Կոնրադ Ադենաուեր, գիտաժողով, ժողովածու, ԵՊԿ, հոդվածներ, «Ստեղծագործելը Խորհրդային Միությունում», «Քաղաքական երկխոսություն Հարավային Կովկաս» տարածաշրջանային գրասենյակ:

Բանալի բառեր. *Կոնրադ Ադենաուեր, գիտաժողով, ժողովածու, ԵՊԿ, հոդվածներ, «Ստեղծագործելը Խորհրդային Միությունում», «Քաղաքական երկխոսություն հարավային Կովկաս» տարածաշրջանային գրասենյակ:*

Abstract

PhD [Arts], Associate Professor at Yerevan Komitas State Conservatory ***Olya Yuri Nurijanyan. - «Collection of the Scientific Conference of the Foundation "Konrad Adenauer"».***

The article gives an overview of the collection of materials of the Conference organized by Yerevan State Conservatory together with the "Konrad Adenauer" Foundation. The proposal to publish the reports came from YSC. The collection "Creating in the Soviet Union" is in Russian, translated by Karlen Matinyan, edited by Naira Martiryan, proofread by Gayane Meroyan, with computer layout and design by "TUMO design", published by "Asoghik" printing house. The collection was targeted towards both the academic community and a wider readership due to its scientific and cognitive nature. The collection aimed to cover the complex and controversial historical and cultural processes of the Soviet era, as well as the complex relationship and interplay between culture and politics during that time.
Key Words: *Konrad Adenauer, conference, collection, YSC, articles, "Creating in the Soviet Union", regional office "Political Dialogue South Caucasus".*

Абстракт *Кандидат искусствоведения, доцент Ереванской государственной консерватории им. Комитаса Оля Юрьевна Нуриджанян. - "Сборник научной конференции Фонда «Конрад Аденауэр»".*

В статье дается обзор сборника конференции, организованной Фондом "Конрад Аденауэр" в ЕГК. Предложение об издании докладов поступило от Ереванской консерватории. Сборник "Творчество в Советском Союзе" на русском языке, переводчик Карлен Матинян, редактор Наира Мартирян, корректор Гаяне Мероян, компьютерная верстка и дизайн организации "ТУМО дизайн", типография "Асохик". Сборник адресован академическому сообществу и широкому кругу читателей, так как имеет научно-познавательный характер. Целью статей было освещение сложных и противоречивых историко-культурных процессов советского периода, а также проблем взаимодействия и взаимообусловленности культуры и политики.
Ключевые слова*. Конрад Аденауэр, конференция, сборник, ЕГК, статьи, «Созидание в Советском Союзе», региональное отделение «Политический диалог Южный Кавказ».*

Տարածաշրջանային՝ Հարավային Կովկասի գիտաժողով

Նախաբան

Վերջին տարիներին «մեծ աշխարհը» ժամանակակից ամենատարբեր հետազոտական մակարդակներում հատուկ ուշադրություն է դարձնում սովետական կայսրությունում իշխանություն-արվեստ, քաղաքանություն-մշակույթ փոխհարաբերության ուսումնասիրություններին: Նման քննարկում-գիտաժողով հնարավոր եղավ կազմակերպել 2021-ին, Երևանում, ԵՊԿ 100-ամյակի առիթով՝ «Կոնրադ Ադենաուեր» հիմնադրամի «Քաղաքական երկխոսություն Հարավային Կովկաս» տարածաշրջանային գրասենյակի հետ, որն այդ ժամանակ տնօրինում էր Թոմաս Շրապելը:

Միջազգային գիտաժողով

Այսօր մեր ձեռքին է միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածուն՝ «Ստեղծագործելը Խորհրդային Միությունում» խորագրով և արդեն գրասենյակի նոր ղեկավար Շտեֆան Մալերիուսի ղեկավարությամբ: Նշենք, որ Գիտաժողովի զեկուցումները տպագրելու առաջարկը ներկայացրել էր ԵՊԿ-ն:

Ժողովածուն ռուսալեզու է, թարգմանիչ Կառլեն Մատինյան, խմբագիր Նաիրա Մարտիրյան, սրբագրիչ Գայանե Մերոյան, համակարգչային շարվածքը և դիզայնը «ԹՈՒՄՈ դիզայն» կազմակերպության, տպագրվել է «Ասողիկ» տպագրատանը: Ժողովածուն հասցեագրված է ակադեմիական հանրության և ընթերցողների լայն շրջանին, քանի որ այն կրում է գիտաճանաչողական բնույթ: Հոդվածների նպատակն է եղել լուսաբանել բարդ և հակասական սովետական ժամանակաշրջանի, պատմամշակութային պրոցեսները, նաև մշակույթի ու քաղաքականության փոխազդեցության ու փոխկապակցվածության խնդիրները:

«Կոնրադ Ադենաուեր» հիմնադրամի «Քաղաքական երկխոսություն Հարավային Կովկաս» տարածաշրջանային գրասենյակի տնօրեն Շտեֆան Մալերիուսի և ԵՊԿ ռեկտոր պրոֆ. Սոնա Հովհաննիսյանի նախաբաններով բացվող ժողովածուում ընդգրկված է 7 հեղինակ:

Ինչպիսի՞ պատկերաշար են տեսել հեղինակները առաջարկվող թեմայի շուրջ:

«Ստեղծագործել՝ ի հեճուկս գաղափարախոսությանը» - Արևելք-Արևմուտք ավանդույթների փոխազդեցություն է (Միխայիլ Կոկժան): Երաժշտություն-կինո՝ արվեստների զուգահեռումներով փրկության արտահայտումներ (Ծովինար Մովսիսյան), սովետական գաղափարախոսության ամենամեծ դրամա (Իրինա Զոլոտովա):

«Ստեղծագործել՝ ի հեճուկս գաղափարախոսությանը» - սա միաժամանակ «դեմ» և «կողմ» տեսնելու դիտարկում է՝ (Լիլիթ Եփրեմյան), «Հետապնդվող կոմպոզիտոր»-ի ստեղծագործական Հայրենիք ընտրելու կենսագրություն (Վերենա Մոգլ), բարձր պոեզիայի կերպարից՝ Դնից մինչև կյանքի պրոզայի Չարիքը՝ Ստալինը, ձգվող 10 պատում (Սառա Մատուշակ), համեմատության եզրերով ավել կամ պակաս բռնապետական ռեժիմների դիմանկարների ուրվագծում (Յաշա Նեմցով):

Հեղինակներն անպատասխան չեն թողնում իրենց իսկ բարձրացրած հարցերը: Օրինակ՝ Միխայիլ Կոկժանը գրում է, թե ինչո՞վ բացատրել հայ կոմպոզիտորների Արևելք-Արևմուտք երաժշտական մշակույթների սկզբունքային տարբերությունները հաղթահարելու պարադոքսը: Հեղինակը տալիս է լուծումը՝ Հայ եկեղեցական (պրոֆեսիոնալ) երաժշտությունն ունենալով որոշ նմանություն եվրոպականի հետ, հենվում է հայկական մելոսի վրա, որն իր հերթին ներառել է արևելյան ինտոնացիայի գծեր: Տեղին է նշել, որ հատկապես հայրենական երաժշտագիտության մեջ արևելյան բնորոշումը տալիս, ցանկալի կլինի կոնկրետացնել արևելաքրիստոնեական եզրույթով՝ այդ կերպ դա չի խառնվի լեգենդներով ու հեքիաթներով մշուշված մեկ այլ Արևելքի հետ:

Անպատասխան չէ Ծովինար Մովսիսյանի հարցադրումը՝ կինոերաժշտությունը Սովետական կոմպոզիտորի համար դիտարկելով փախուստի (կամ, ինչպես Յաշա Նեմցովն է նշում «ներքին էմիգրացիա») ու գոյության նոր միջոց, տալիս է պարզ եզրակացություն, որ «փնտրողը՝ գտնում է»:

Իրինա Զոլոտովան ոչ միայն ամփոփում, այլ նաև սկսում է հարցադրումով, թե ի՞նչը բերեց 1948 թվականին և Սերգեյ Դովլաթովին է մեջբերում՝ «Ո՞վ է գրել այդ 4 միլիոն մատնությունը (донос)… հոդվածի ամփոփումպատգամը՝ մեկ այլ դասականի խոսքն է. «Порядочность не предполагает героичности, она предполагает неучастие в подлости».

Լիլիթ Եփրեմյանի հերոսի՝ Էդվարդ Միրզոյանի սովետական գաղափարախոսության ամենամեծ ճընշման տակ երկար և ինտենսիվ, բայց մայրուղային երաժշտության մեջ սովետական գաղափարախոսությունից ամենահեռու գտնվող հայ կոմպոզիտորի շուրջ կառուցված նյութի պատասխանը «Շուշանիկ» լայտթեմայի գաղափարն էր. Ալեքսանդր Շիրվանզադեի «Քառս»-ից Ամբատ Ալիմյանի մենախոսությունը. «Ես կորցրեցի ամեն ինչ, ինչով ապրում ու հպարտանում էի...»:

Ստեղծագործել՝ ի հեճուկս գաղափարախոսության

Փետրվարի 22-ին Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի Կոմիտասի անվան դահլիճում «Կոնրադ Ադենաուեր» հիմնադրամի հետ համատեղ կայացավ «Ստեղծագործել՝ ի հեճուկս գաղափարախոսության» խորագրով շնորհանդես-գիտաժողովը:

Ողջույնի խոսքով ելույթ ունեցան Կոնրադ Ադենաուեր հիմնադրամի «Քաղաքական երկխոսություն Հարավային Կովկաս» տարածաշրջանային ծրագրի ղեկավարի տեղակալ Մաթիաս Հեսպենը և Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ռեկտոր Սոնա Հովհաննիսյանը: Վերջինս կարևորեց հայ-գերմանական մի քանի դար ձգվող երաժշտական առնչությունները առանձնացնելով Կոմիտասին, Սպիրիդոն Մելիքյանին, Բարսեղ Ղորղանյանին: Այսօրվա մշակութային ու կրթական համագործակցության համատեքստում նշեց

ԵՊԿ և Դյուսելդորֆի կոնսերվատորիայի հետ առնչությունը, հիշեց 2022 թ. բեռլինյան հայտնի «ԿՈՒՍՍ» կվարտետի իրադարձություն դարձած համերգն ու անսամբլի թավջութակահար Միքայել Հախնազարյանի նախաձեռնությամբ կազմակերպված վարպետության դասերը:

2021-ին, Երևանում, ԵՊԿ 100-ամյակի առիթով «Կոնրադ Ադենաուեր» հիմնադրամի հետ համատեղ կայացել էր «Ստեղծագործելը Խորհրդային Միությունում» խորագրով միջազգային գիտաժողով՝ տոտալիտար անցյալին վերաբերող քննարկումների նոր հարթակ ստեղծելու նպատակով, իսկ թեմայով հետաքրքրվող ավելի լայն լսարանին հասանելի լինելու համար զեկուցումները տպագրվեցին: Փետրվարի 22-ի գլխավոր թեմայի՝ «Ստեղծագործել՝ ի հեճուկս գաղափարախոսության» ժողովածուին անդրադարձավ երաժշտագետ Օլգա Նուրիջանյանը:

Հրատարակությունում ներառված հեղինակներից Վերենա Մոգլը (Դետմոլդի Երաժշտության բարձրագույն դպրոցի գիտաշխատող, դասավանդում է Համբուրգի երաժշտության և թատրոնի բարձրագույն դպրոցում) հեռավար տեսակապով ներկայացրեց «Երգեր, որ կյանքն է գրել. Մյեչեսլավ Վայնբերգի «Հայոց լեռներում» երգաշարը օպ. 65» խորագրով զեկուցումը:

ԵՊԿ գիտական գծով պրոռեկտոր, արվ. թեկն., դոցետ Ծովինար Մովսիսյանը «Հայ երաժշտագիտության սպիտակ էջեր» զեկուցմամբ առաջին անգամ հնչեցրեց ԽՍՀՄ բռնապետական ռեժիմի կողմից դատապարտված հայ երաժիշտների, այդ թվում՝ Արամ Քոչարյանի, Վահան Տեր-Առաքելյանի, Կոնստանտին Մելիք-Վրթանեսյանի, Գևորգ Յաղուբյանի, Ռուբեն Թերլեմեզյանի, Բարսեղ Ղորղանյանի անունները, որոնց ձերբակալության մասին վկայությունները պահպանվում են Ե. Չարենցի անվան Գրականության և արվեստի թանգարանի արխիվում: Բանախոսը զուգահեռեց նույն այդ Խորհրդային Միության տարիների վերելքի՝ կրթամշակութային ծրագրի կառուցողների և նորագույն շրջանում քաղաքացիական դիրքորոշման բացակայության ժամանակները: Կարևորեց մեր երկրի պատմության հիշողությունը վավերացնելու վաղուց հասունացած հարցը, միաժամանակ հորդորեց նախ հասկանալ, ապա՝ դատապարտել անցյալը, որպեսզի նորից չհայտնվել տոտալիտար ռեժիմի իրավիճակում:

ԵՊԿ Կատարողական արվեստի պատմության և տեսության ամբիոնի վարիչ, արվեստագիտության թեկնածու, դոցենտ Լիլիթ Եփրեմյանն առաջարկված «Ստեղծագործել՝ ի հեճուկս գաղափարախոսության» քննարկման շուրջ հայացքն ուղղել էր հայ ժամանակից ֆիլմերին: «Հայ կոմպոզիտորների կինոերաժշտությունը խորհրդային բռնապետության գոհերին նվիրված ֆիլմերում» զեկուցմամբ ներկայացրեց ամերիկահայ ռեժիսոր Մայք Գյուրջյանի «Ամերիկացին» ֆիլմը, երաժշտության հեղինակ՝ Անդրանիկ Բերբերյան և Հարություն Խաչատրյանի «Նկարչի երեք գերեզմանները», երաժշտության հեղինակ Վաչե Շարաֆյան: Յեղասպանություն վերապրածի ժառանգ՝ Մայքլ Գյուրջյանի ֆիլմը մեծ հայրենադարձության նախագծի պատմական իրադարձությունների մասին է, հեղինակը վստահ է, որ մենք կարող ենք մեր կյանքը կառուցել ժպիտով, ոչ՝ արցունքներով: Բանախոսը նկատեց, որ ռեժիսորն իր աշխատանքում կարևորելով հուզական կողմը՝ երիտասարդ կոմպոզիտորի համար շռայլում է ֆիլմի տարածքը, իսկ Անդրանիկ Բերբերյանը կինոյի թափին համահունչ տեմբրային, ժանրային ու ոճական ճոխ համադրություններ է կիրառել: Հարություն Խաչատրյանի հերոսի՝ մարդկանց միջև կորցրած սերը փնտրող նկարչի կյանքի երեք քաղաքները՝ երեք փախուստի 30 տարիների վավերագրություն է, որտեղ Վաչե Շարաֆյանի երաժշտությունը լսելի է իր զգույշ ու զգացած ներկայությամբ, իսկ երբ զեկուցման ավարտին ֆիլմից դուրս Վաչե Շարաֆյանի նույն երաժշտության ուղեկցությամբ հաջորդեցին Վահան Անանյանի կտավները, մի քանի րոպե տևած ցուցադրումը ընկալվեց որպես կինո՝ կինոյի մասին:

Միխայիլ Գոկժան - ԵՊԿ պրոֆեսոր, արվեստագիտության թեկնածու, կոմպոզիտոր

«Արևելքի և Արևմուտքի երաժշտական ավանդույթների համատեղման պարադոքսները Հայաստանի կոմպոզիտորների ստեղծագործության մեջ» հոդվածը հաստատում է այն ռազմավարությունը, որ բոլոր հնարավոր հարթակներում անդադար համառությամբ անհրաժեշտ է արթուն պահել արևմտաեվրոպական պրոֆեսիոնալ արվեստի զարգացման սկզբունքային փուլերում Արևել-Արևմուտք համատեքստում հայ երաժշտամտածողության կենսունակության փաստը: Հայ կոմպոզիտորական արվեստի էվոլյուցիայի փուլերի մեջ նշելով շրջադարձային հեղինակներին, իր դիտարկմամբ առանձնացնում է Էդգար Հովհաննիսյանին ու Ալ. Հարությունյանին, որպես նեոբարոկո գեղագիտության բնորոշ մտածողության, տեխնիկական փայլի մարմնացումներ, իսկ Մանսուրյան, Զոհրաբյան, Տերտերյան անուններն առանձնացնում է որպես տեխնիկայի մեջ ազգային ավանդույթի կողմնորոշումը պահպանող անհատականություններ:

Ծովինար Մովսիսյան - ԵՊԿ գիտական գծով պրոռեկտոր, արվեստագիտության թեկնածու, դոցենտ

«Կինոերաժշտությունը որպես զուգահեռ իրականություն». - հոդվածը ցույց է տալիս անհատական ազգային և համաշխարհային միտումների համընկումները, երբ բնեռային լեզվական մտածողությամբ արվեստի երկու տեսակների՝ կինոյի և երաժշտության շաղկապումը ապրեցրել է գաղափարախոսությանը դեմ գնացող կոմպոզիտորներին: Կինոերաժշտությունը դառնում է ստեղծագործական ազատ լաբորատորիա: Կոմպոզիտորները «գտնում», փորձարկում էին ակադեմիական երաժշտությունը թարմացնող հնարները և միաժամանակ փոխում երիտասարդ արվեստի «սոցիալական» դիրքը՝ կինոերաժշտությունը լրջանում էր: Այստեղ նշվում են անուններ Ավետ Տերտերյան, Էդգար Հովհաննիսյան, Յուրի Հարությունյան և այլք:

Իրինա Զոլոտովա - ԵՊԿ պրոֆեսոր, արվեստագիտության դոկտոր «1948. կոմպոզիտոր և գաղափարախոսություն».

«1948. կոմպոզիտոր և գաղափարախոսություն». -

գիտա-հրապարակախոսական ժանրի աշխատանքում լսելի է հեղինակի էմոցիոնալ ոճը՝ ցայտուն, համարձակ, տպավորիչ զուգահեռների հիմքով: 1948-ի Որոշման ոդիսականը կառուցում է դետեկտիվ ժանրի հստակ կառուցվածքով, փազլի նման հավաքվող ընթացքով, վարանոտ գործողություններով՝ ի վերջո դառնալով հանցագործության մասին պատմություն: Եթե հակիրճ, հոդվածը կարող է ուսանողին առաջարկվող պարտադիր ընթերցման նյութ լինի, որը սթափ գնահատական է տալիս 1948-ի խմորումներին՝ նախորդող ու հաջորդող իրադարձություններով ու դեմքերով:

Լիլիթ Եփրեմյան - ԵՊԿ Կատարողական արվեստի պատմության և տեսության ամբիոնի վարիչ, արվեսագիտության թեկնածու, դոցենտ, հոգեբան, սոցիոլոգ, լրագրող, թարգմանիչ, ցեղասպանագետ

«Էդվարդ Միրզոյանի պարադոքսը կամ «հանուն և հակառակ» սովետական հասարակարգի» նյութը կոմպոզիտորին վերընթերցելու հնարավորություններից է: Հիշեցնենք, որ Լիլիթ Եփրեմյանը 2011-ին հրատարակել է «Էդվարդ Միրզոյանը նամակներում և երկխոսություններում» փաստավավերագրական մոնոգրաֆիկ ժանրում եզակի աշխատություն, որը դուրս է ակադեմիական երաժշտագետների համար ընդունված դասական պատկերացումներից ու ընդունված մեթոդաբանությունից: Սա գիտական ուսումնասիրության այն տեսակն է, որը կոնսերվատորիայում հիմնել էր դեռ Արշակ Ադամյանը (1920-ականներից հետո), իսկ տարիներ անց այն շարունակել էր Ռաֆայել Ստեփանյանը, ում ղեկավարած դասարանն է ավարտել Լիլիթ Եփրեմյանը: Էդվարդ Միրզոյանի կերպարի թեմայով 9 վարիացիաներ կառուցվածքով հոդվածը նույնպես մասնագիտացման ճանապարհին կանգնած երաժիշտներին առաջարկվող նյութ կարող է լինի, որտեղ հայրենական պատմության կոնկրետ անունների՝ Էդվարդ Միրզոյանի, Լուսինե Զաքարյանի, Օհան Դուրյանի, մեծանուն քաղաքական գործիչ Գրիգոր Հարությունյանի կերպարների միջոցով խառնվածք ձևավորելու կենդանի օրինակների ենք հանդիպում, թե ինչպես են տարբեր աստիճանի պաշտոնյաներ տոտալիտար ռեժիմի պայմաններում պետական մեքենայից բարձր ու մարդկային եղել:

Վերենա Մոգլ - Դետմոլդի Երաժշտության բարձրագույն դպրոցի գիտաշխատող, դասավանդում է Համբուրգի երաժշտության և թատրոնի բարձրագույն դպրոցում

«Երգեր, որոնք կյանքն է գրել («Հայկական լեռներում», օպ 65, վոկալ ցիկլը)». - հոդվածում հեղինակը Մեչիսլավ Վայնբերգի դիմանկարը ներկայացնելու նպատակ ուներ: Լեհ-հրեական ծագումով մտավորականը Սովետական Միությունում «հետապնդվող կոմպոզիտոր» բնորոշումը չընդունող, բայց այդպիսի ճակատագրով արվեստագետ էր, միաժամանակ մինչև կյանքի վերջ մնաց իր ստեղծագործական Հայրենիքում՝ պաշտելի Շոստակովիչի երկրում («փոքր Շոստակովիչ»): Վերենա Մոգլը գիտաժողովին անդրադառնալով վոկալ ցիկլի ստեղծմանը՝ ցուցադրելով Գերմանիայում գտնվող ձեռագիրը, հույս էր հայտնել, որ մի օր այն կտպագրվի: Գիտաժողովից շատ չանցած, ԵՊԿ գրադարանին ուղղված հարցումին ի պատասխան իմացանք, որ դեռևս սովետական տարիներին այդ գործը տպագրվել է Մոսկվայում:

Սառա Մատուշակ - Բեռլինի Վ. Հումբոլդտի անվան համալսարանի Արևելաեվրոպական պատմության ամբիոնի գիտաշխատող

«Խարազանված մուսա՞: Երաժշտություն գրելը Ստալինի օրոք (1932-1953)». - Գեղարվեստական և հետազոտական դիտարկմամբ արվեստը քաղաքական նուրբ հյուսված թելերից երբեք ազատ չի լինի, Ստալինը կենտրոնական տեղ էր հատկացնում արվեստին: Երաժշտության աբստրակտ լինելը տոտալ հսկողությունից քիչ ազատ էր պահում: Հեղինակն առանձնացնում է պատմության գլխավոր և երկրորդական կատարողներին, իսկ «լավ և վատ արվեստ» բնութագրման մեջ գրում է, որ իսկական կամ բացարձակ լինելու համար ստեղծագործողը պատմական միջավայրից պետք է բարձր լինի: Նաև՝ եթե հասարակության ոգին բարձր է անհատի ոգուց, այդ անհատը մահվան է դատապարտված: Հասարակության պատկերի խախտումը Սառա Մատուշակը տեսնում է 1917-ի հեղափոխությամբ ջնջված հին էլիտայի տեղը գրաված ամենացածր շերտերից եկածների մեջ, օրինակ՝ Վանո Մուրադելի (ի դեպ, այս կոմպոզիտորի դեպքում հեղինակը մանրամասնում է. «ծնվել է հասարակ հայկական ընտանիքում, Ստալինի ծննդավայրում», իսկ Արամ Խաչատրյանին նշելիս գրում է. «ծագումով Կովկասից է» ...լավ կլիներ, որ դեռևս զեկուցման ժամանակ դիտարկումը հաշվի առնվեր և գրավոր տարբերակում նույնը չկրկնվեր):

Յաշա Նեմցով – Վայմարի երաժշտական բարձրագույն դպրոցի Հրեական երաժշտության պատմության ամբիոնի վարիչ, արվեստագիտության դոկտոր

«Երաժշտությունը և տոտալիտարիզմը (բռնապետության համեմատական հետազոտության փորձ)». – հոդվածում հեղինակը համադրում է Սովետական (գլխավորապես՝ Ստալինյան ժամանակի), Ֆաշիստական, իբրև հավելում՝ Չինաստանի, Կամբոջայի, Սոմալիի, Իսլամական պետություն կոչված բռնապետությունները:

Սովետական Միությունում և Գերմանիայում երաժշտության հանդեպ դիրքորոշումները հատկապես նման էին 1920-1930-ականներին, օրինակ՝ նույնատիպ ACM և ՀԸԿԾ կազմակերպությունների գոյությունը, անվերջ ժողովները «կարգապահ ծիսակատարությունները» (օրինակ Մոսկվայի Ֆելիքս Կոնի կոնսերվատորիայում): Երկու ռեժիմներում կար թշնամու ընդհանուր կերպար, արմատապես մերժում էին երաժշտական մոդեռնը, պայքարում էին «ամերիկանացման» դեմ (ջազի): 1930-ականներին ծագեց մեծ տարբերությունգ ԽՍՀՄ-ում ձևակերպվեց գեղագիտական դոկտրինան, իսկ Գերմանիայում՝ պարզապես արգելվում էր, քանի որ դժվար էր մշակույթում գոյություն ունեցող հոսանքների ամբողջ դիապազոնը միասնական տեսության բերել: Բացասական ազդեցության և ուժեղ մշակույթի կորստի հետ մեկտեղ այս ռեժիմների ժամանակ կար հարուստ երաժշտական կյանք, ի տարբերություն Արևելքի ու Աֆրիկայի նշված բռնապետական երկրներում: Երաժշտությունը չի կարող պաշտպանել ազատությունը և մարդկայնությունը, բայց ազատության հետ միության մեջ է գտնվում:

Տարածաշրջանային՝ Հարավային Կովկասի գիտաժողով

Ժողովածուի հեղինակներից մեկը, Սովետական Միությունում երբեք չապրած հետազոտողը՝ Սառա Մատուշակը նկատելի ուշիմ դիրքորոշում է դրսևորել իր ուսումնասիրության սահմաններում՝ մեջբերելով Սովետական երաժշտության ապրող դասականի՝ Ռոդիոն Շչեդրինի դիտարկումը. «... Երաժշտությունն իշխանության և արվեստի պարզունակ սխեմա չէ, ինչպես այն պատկերում են ժամանակակից Արևմուտքի մասնագետները...

Յանկացած ստեղծագործական կյանքը դժվար է: Իսկ ԽՍՀՄ տոտալիտար համակարգում արվեստագետի կյանքը ծայրահեղ դժվար էր: Շատ էին տարօրինակությունները, կոմպրոմիսները, աբսուրդը... Մի՛ պատկերեք մեր աշխարհը միայն սև և սպիտակ, պարոնայք...»:

Հեղինակի մասին. ՕԼՅԱ ՅՈՒՐԻԿԻ ՆՈՒՐԻՋԱՆՅԱՆ (ծ. 21.04.1978, Երևան), երաժշտագետ, արվեստագիտ. թեկն. (2011): Ավարտել է՝ Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի երաժշտագիտության բաժինը (2001, ղեկավար՝ Զ. Տեր-Ղազարյան), նույն ԲՈՒՀ-ի ասպիրանտուրան (2004, գիտ. ղեկավար՝ Ա. Արևշատյան): Աշխատել է Երևանի Պ. Չայկովսկու անվ ՄՄԵԴ-ում, 2004-ից ԵՊԿ Երաժշտության պատմության ամբիոնի դասախոս է, կարդում է «Արտասահմանյան երաժշտության պատմություն», «Վոկալ արվեստի պատմություն», «Հայ վոկալ արվեստի պատմություն» դասընթացները: Ավարտել է Հեռուստա և Ռադիոհաղորդավարների դպրոցը և ձեռք է բերել հաղորդավարի մասնագիտություն, դասընթացի ղեկավար՝ Սուսաննա Ալեքսանյան (2006): Աշխատել է 2006-2019 թթ. «ՎԷՄ» ռադիոկայանում՝ (2008-2019թթ.՝ երաժշտական խմբագիր), վարել է «Հայ կոմպոզիտորներ և կատարողներ» հեղինակային հաղորդաշարը, ուղիղ եթերում (2014-2018 թթ.): Անցել է "Deutsche Welle" - Akademie-ի կազմակերպած «Ռադիո-հարցազրույց» թեմայով դասընթացները (2011): Գիտական հետաքրքրությունների ոլորտը ներառում է հայ երաժշտության պատմությանը և արևմտաեվրոպական երաժշտությանն առնչվող հարցերը: Գիտական զեկուցումներով մասնակցել է հանրապետական և միջազգային գիտաժողովներում: 2019թ-ից Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի գիտական քարտուղարն է:

Об авторе: *ОЛЯ ЮРЬЕВНА НУРИДЖАНЯН (род. 21 апреля 1978, Ереван) музыковед, кандидат искусствоведения (2011). Окончила музыковедческое отделение ЕГК им. Комитаса (2001, рук. З. Тер-Казар.ян), аспирантуру ЕГК (2004, научный рук. А. Аревшатян). Работала: в ереванской Специальной музыкальной школе им. Чайковского. С 2004-го года преподаватель кафедры1 Истории музыки ЕГК. Ведет курсы "История зарубежной музыки", "История вокального искусства ", "История армянского вокального искусства ". Окончила Школу теле-радиоведущих по специальности "ведущая" (руководитель курса Сусанна Алексанян, 2006). С 2016-2019 г. Работала на радиостанции "ВЭМ" (2008-2019 г., музыкальный редактор), вела авторскую радиопередачу "Армянские композиторы и исполнители" (с 2014-го). Прошла курсы "Радио-интервью", организованные «Deutsche Welle» - Akademie (2011). Сфера научных интересов — вопросы, связанные с историей армянской и западноевропейской музыки. Участвовала в республиканских и международных конференциях. С 2019-го года является ученым секретарем ЕГК.*

About the author: *OLYA YURI NURIJANYAN (born in 1978, Yerevan) - musicologist, PhD in Arts (2011). She graduated from Musicology Department of Yerevan Komitas State Conservatory in 2001 (class of Z. Tep-Ghazaryan), completed a post-graduate course at YSC in 2004 (scientific supervisor: A. Arevshatyan). She worked at Yerevan Specialized Musical School named after Tchaikovsky. Since 2004 she has taught at the Department of the History of Music, YSC. She conducts the courses in the History of Foreign Music, History of Vocal Art and History of Armenian Vocal Art. She graduated from the School of TV and Radio Presenters, majoring in Presenting (course instructor Susanna Alexanyan, 2006). In 2016-2019, she worked at the radio station VEM (2008-2019, music editor), hosted the author's program "Armenian Composers and Performers" (since 2014). She completed a training course on radio interviewing, organized by Deutsche Welle Akademie (2011). The field of her research interests includes the history of Armenian and Western European music. Olya Nurijanyan has participated in national and international conferences. Since 2019 she has been the Academic Secretary of the Academic Council of Yerevan state conservatory after Komitas.*